ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA

№ 1112/3821-22
31.01.2022

Էլ. հասցե՝ aravotoratert@gmail.com,
հեռ՝՝ 060 27 48 01
«Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր
Արամ Աբրահամյանին

Հարգելի՛ պարոն Աբրահամյան,

Ի պատասխան հունվարի 25-ին «Առավոտ» օրաթերթից ստացված հարցման՝ հայտնում ենք, որ ՌԴ-ում ՀՀ դեսպանության տրամադրած տեղեկատվության համաձայն ս.թ. հունվարի 21-ին դեսպանությունում կազմակերպված ՀՀ դեսպանի հրաժեշտի ընդունելության ժամանակ տեղի է ունեցել մասնավոր բնույթի միջադեպ (լարված զրույցի տեսքով)՝ Մոսկվայում բնակվող հայ գործարար Մակար Նահապետյանի և «Առավոտ» օրաթերթի թղթակից Նաիրա Բաղդասարյանի միջև: Միջադեպի պահին վերջիններիս մոտ կանգնած դեսպանության պահպանության աշխատակցի կողմից Նաիրա Բաղդասարյանը ուղեկցվել է դեսպանության նախասրահ՝ հետագա անցանկալի զարգացումից խուսափելու նպատակով, իսկ Մակար Նահապետյանը կատարվածից հետո անմիջապես հեռացել է դեսպանությունից:

Միջոցառմանը մասնակցող հյուրերը չեն նկատել կատարվածը, քանի որ այն տևել է շատ կարճ, առանց ներկաների ուշադրությունը գրավող որևէ դրսևորման:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ նախասրահում գտնվող Նաիրա Բաղդասարյանը վեճի է բռնվել տեղում գտնվող մեկ այլ հյուրի հետ, ով հանդես է գալիս որպես մեկ այլ ԶԼՄ-ի ներկայացուցիչ: Տեղի ունեցածը նույնպես կրել է մասնավոր բնույթ և որևէ զարգացում չի ստացել:

Հավելենք, որ հաջորդ օրը Մակար Նահապետյանը զանգահարել է դեսպանություն և ափսոսանք հայտնել կատարվածի կապակցությամբ:

Այսպիսով, տեղի ունեցածը զուտ մասնավոր բնույթի միջադեպ է եղել, որն առնչություն չունի լրագրողների նկատմամբ որևէ խտրական վերաբերմունքի դրևսորման հետ: Միաժամանակ նշենք, որ դեսպանությունը չի կարող պատասխանատվություն կրել երկու մասնավոր անձանց միջև տևական ժամանակ պահպանվող լարված հարաբերությունների համար:

Հայտնում ենք նաև, որ Մակար Նահապետյանը չի հանդիսանում Մոսկվայում Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ:

Հարգանքով՝

Recoverable Signature

X

ՍԵՐՈԲ ԲԵՋԱՆՅԱՆ

Signed by: BEJANYAN SEROB 3912720061

Սերոբ Բեջանյան
Լրատվության և հանրային
դիվանագիտության վարչության պետ

Լրատվամիջոցների հետ կապի և
հանրային դիվանագիտության բաժին
հեռ.՝ 060 620 202